



32. ԼՈՂՄԱ ՀԵՔԻՄ

Մի մարդ էթում ա մեջին փետ կտրելու: Հետը վեր ա կալնում մի կացին ու պարան: էթում մի ծառի մոտ նստում ա ու հաց ուտում: Հետո վեր ա կենում տենում, որ էդ ծառը, որի տակ նա նստել էր, լավ ճղքեր ունի: Մի ճիպոտացու կտրեց, իրա կացինը ու պարանը պահեց էդ ծառի քոքի տակ, ինքը գնաց Ստամբուլ, որ բանվոր բռնվի:

Մեյդանի մեջ ոստ էկավ մի Քոսա ու ասեց նրան, թե չի՞ գա իրա մոտ բանելու: Նա հարցրեց, թե ի՞նչ բան ունի անելու: Քոսեն ասեց, որ գա իրա ոսկին ու փողերը խառնի թիով: Էս մարդը էկավ Քոսի տունը: Քոսեն տարավ նրան մի օթախ բքեց, արկալորացրեց նրան, սաքի թե ոսկի չգողանա: Նա մնաց մենակ օթախում: Օթախը լիքն էր օձերով, որ ինչ մարդ Քոսեն խարում քցում էր էս օթախը, օձերը կծում էին ու սպանում, հետո Քոսեն գալիս էր մարդին մորթում, նրա մեջի օձի յաղում հանում ու դեղ շինում: Էս մարդի ձեռին էր դեռ հլա էն ճիպոտը, որ էն ծառից քաղել էր: Մեկ էլ տեհավ, որ օձերը էկան ու իրա ձեռի ճիպոտին գլուխ տվին, գնացին. էն մարդը մնաց զարմացած: Սաղ օրը նա մնաց անհաց, անշուր օթախում նստած: Մեկել օրը Քոսեն էկավ, որ տանի էն

մեռած մարդուն ու միշի յաղուն հանի դեղ շինի, համա մնաց զարմացած, երբ տեհավ, որ դեռ սաղ ա: Քոսեն հարցրեց, թե ո՞նց էլավ, որ նա սաղ ա: Նա ասեց, որ էս ձեռիս ճիպոտը ինձ ազատեց:

Քոսեն հարցրեց, թե որտեղից ա կտրել էն ճիպոտը ու ասեց, թե որ էն ծառը շանց տա, նա նրան շատ փող կտա:

Քոսեն նրան վեր կալավ ու տարավ, որ շանց տա իրան էն ծառը: Էն մարդը տարավ շանց տվեց էն ծառը, որտեղ նա իրա կացինը ու պարանը պահել էր: Քոսեն ծառը քոքըհան արեց ու տակը փորեց: Փորեց փորեց, մի տափակ քար քթավ. բանձրացրեց, տակը մի կարմիր օձ էր նստել: Տվեց նրան սպանեց, կտրտեց լըցրեց պղինձը ու դրեց կրակի վրա, որ էփի:

Իրա քունը տարավ ու նրան ասեց.

— Դու մուղալիթ կաց, որ էրեսի եզր շթափի, երբ որ կէփի, դու ինձ վեր կացրու:

Էն մարդը ինքն իրան ասեց.— Սա որ զարթնի, պտի ինձ սպանի, լավ է ես հիմիկուց ինձ սպանեմ՝ էս պղնձի էրեսը քաշեմ ու խմեմ, որ յաղու ա:

Նա խմեց էրեսը քաշելով ու էլավ կողմա հեքիմ: Ինչ քար, ինչ քոլ խոսում էր՝ նա իմանում էր: Ամեն մի քոլը ասում էր, թե ես էս բանի դեղ նմ, էնպես որ ինչ թավուր դեղ ուզենար, կարար շինի: Էրկու շանավար ինչ որ իրար հետ ասում, խոսում էին՝ նա հասկանում էր: Քոսեն վե կացավ ու տեհավ, որ պղնձի էրեսը քաշե են, խմել: Նրան հարցրեց՝ նա զորդը ասեց, որ ինքն ա խմել:

Քոսեն ասեց.— Լա՛վ, բաս ես քո աշկերտը, դու իմ ուստեն:

Քոսեն ու կողմա հեքիմն իրար հետ գնացին, ճամփին ուրիշ մարդկերանց էլ ռաստ էկան, նրանց էլ իրանց ընկեր շինեցին ու գնացին: Գշերը վրա հասավ: Նրանք մի մաղարա մտան, տեհան միաչքանի շորան՝ դազանակը ուսին, իրա էծերը, որ մինը մի ձիու շափ կըլնեի, տուն էր անում: Էս միաչքանի շորանը նրանց սիրով իրա մոտ ղոնաղ արեց ու ասեց, որ էս գշեր իրա մոտ են, տեղ չէթան: Նրա հետ հաց կերան ու պառկեցին քնելու: Մաղարի մեջտեղը կրակը վառվում էր. միաչքանի շորանը մաղարի դռանը մի մենձ ջաղացաքար էր դեմ տվել, որ նրանք էլ չկարենան դուս գալ: Երբ որ լավ քնեցին էս ղոնաղները, սավալի կողմա հեքիմից, որ մտիկ էր անում, թե վերջը ինչ ա ըլնելու. տեհավ որ, էն միաչքանի շորանը տաքացրած շիշը կոխեց իրա ընկերներից միին փո-

ըր, կրակի վրա խորովեց ու կերավ: Էսպէս բոլորին կերավ, մնաց մենակ Լողմա հեքիմը, ու նա էլ քնեց: Լողմա հեքիմը մտածեց, թե ո՞նց պրծնի էն շորանից: Կրակի մեջ դրած էր մի շիշ: Վեր կալավ տաքացրած նրա աչքը կոխեց: Չորանը վեր կացավ նրա հետևից ընկավ, Լողմա հեքիմը մտավ նրա էծերի մեջ: Չորանը շատ շարձարվեց, համա չկարաց բռնի: Մնաց լուսացավ: Չորանը դռանը կանգնած ձեռներով մին-մին մտիկ էր անում, որ նա էլ հետները չէթա: Լողմա հեքիմը վրեն էծի մորթի քցեց ու կուղե-կուզ գնաց, նա ձեռները քսեց նրա վրեն ու թողեց: Լողմա հեքիմը պրծնելով նրա ձեռից, հեռվից տվեց թվանքով սպանեց նրան:

Լողմա հեքիմը մենակ գնաց, գնաց մի ջաղացի ուստ էկավ ու շունքի մթնում էր, էս ջաղացի մեջ մնալու: Իրիկունը տեհավ, որ էկան գելը, արջը ու աղվեսը:

Աղվեսը գելին հարցրեց.— Գել աղբեր, ինչ թազա խարար կա:

Գելը ասեց.— Աղվես աղբեր, ի՞նչ թազա խարար պտի ըլնի. շուրումը մի ոսկոր կա, էթում եմ կրծում եմ, կրծում ու ետ գալի: Աղվեսը հետո արջին հարցրեց, թե ի՞նչ թազա խարար կա:

Արջը ասեց.— Առավոտը, որ ես էստեղից դուս գամ ու իմ հետևից որ թրիք թափվի, էն թրիքը ֆլան թաքավորի տղի աչքերի դեղն ա, շունքի նա քոռ ա:

Հետո արջը հարցրեց աղվեսին, թե ի՞նչ թազա խարար կա:

Աղվեսը ասեց.— Աղբեր, ի՞նչ թազա խարար պտի ըլնի, շուրում մի տոպրակ ոսկի կա, էթում հետը հաղ եմ անում ու գալի, համա չեմ կարում բերի:

Պուճախում տափ կացած Լողմա հեքիմը սաղ լսեց: Հենց որ լիսացավ՝ գելը, արջը ու աղվեսը գնացին. նա էլ նրանց հետևից գնաց: Արջը որ դուս գնաց ջաղացից, թրքեց ճամփին. նա հավաքեց ու աղլխի մեջ ածեց, հետո գնաց տեհավ՝ աղվեսը հաղ ա անում ոսկե տոպրակի հետ: Նա մի դիհ տափ կացավ, երբ որ աղվեսը հեռացավ՝ գնաց վե կալավ ու տարավ:

Ճամփին մի մարդ ուստ էկավ ու հարցրեց, թե ի՞նչ տեղից ա էգքան ոսկին. նա տեղը ասեց:

էն մարդը ասեց.— Ծս պտի էթամ էնտեղ ու թաք կենամ, տենամ նրանք ի՞նչ են խոսում:

Լողմա հեքիմը շատ աղաչանք արեց, որ չէթա ու ասեց, որ իրա ոսկու կեսը նրան կտա, համա նա չլսեց:

էն մարդը գնաց շաղացը ու թաք կացավ, որ լսի թե ի՞նչ են խոսում:

Աղվեսը հարցրեց էլի արջին.— Ի՞նչ նոր խաբար կա:

Արջը ասեց.— Ա՛յ աղբեր, էլ շեմ ասի, շունքի լսել են ու իմ թրիքը հավաքել տարել:

Աղվեսը ասեց.— Էն տոպրակը, որ լիքն էր ոսկով ու ես ամեն վախտ էթում նրա հետ հաղում էի, լսել են ու տարել էն ոսկին. ոնց էրևում ա, մի մարդ ամեն վախտ գալիս ա ու լսում մեզ:

Էս ասեց ու աղվեսը ման էկավ, չըլնի թե մարդ ա տափ կացել: Քթավ էն տափ կացած մարդին ու էնքան տվին, որ տեղն ու տեղը սպանեցին:

Հիմա խաբար տանք լողմա հեքիմից: Նա գնաց էն թաքավորի մոտ ու ասեց, որ նրա տղի աչքերը կարա լավացնի, ու ղորդ որ լավացրեց: Թաքավորը ուզում էր իրա աղջիկը տա նրան, համա շուգեց, շունքի ինքը կնիկ ուներ, համա շատ լիրբ ու անզգամ:

Նա տենում էր լողմա հեքիմը ամեն բան իմանում ա, մի խոսքով իմաստուն ա, հարցնում էր նրան, թե ինչիցն ա, որ նա էդքան խելոք ա ու իմաստուն, համա նա չէր ասում, շունքի որ ասեր, ինքը կմեռներ:

Լողմա հեքիմը ուզեց, որ էնթավուր ղանջղ կնկանից պրծնի ու խաբեց, որ ֆոր ա քթել, լիքը ոսկի ու էրծաթ ու ասեց, որ էթան բերեն: Ինքն ու իրա կնիկը գնացին հասան ֆորին:

Մարդը ասեց.— Ծս կախ ըլնեմ ու հանեմ էրծաթ, ոսկին:

Կնիկը ասեց.— Ինչո՞ւ, հազր ես կախ ըլնեմ, դու ուզում ես էթաս լավերը վեր կալնես ու ինձ փսերը մնա՞, էդ քու բանը չի:

Ինքը կախ էլավ պարանով. ճամփի կիսին մարդը պարանը կտրեց, քցեց մեջը ու մի մենձ քար գրեց բերնին, դնաց:

Էդ ֆորում դեեր կային: Էդ ղանջղ կնիկը էնքան ձեն տվեց ու ճղավեց, որ դեերն էլ նրանից վախենում էին ու ուզում էին ղուս գա, համա չէր ըլնի, քարը դրած էր բերնին:

Մի վախտ լողմա հեքիմը գնաց տենա, թե ինչ ա էլե իրա կնիկը: Քարը վե կալավ թե չէ, դեերը դուս էկան ու աղաչանք արին, որ էն ղանջղ կնկանից ազատի: Նա ասեց, որ իրա կնիկն ա ու ինքն ա բերել քցել էդ ֆորը, որ պրծնի ձեռից:

Դեերից մինը ասեց.— Բաս որ դու ինձ լավություն արիր իմ րնկերների հետ պրծացրիր էն ղանջղի ձեռից, ես էլ ուզում եմ քեզ

լավութիւնն անեմ: Ես կէթամ ու ֆլան թաքավորի ազի մեջը կմտնեմ
ու երբ որ դու դաս, ես դու կգամ. նրանից դենը կէթամ ուրիշ
թաքավորի մոտ, համա գու չգաս ինձ հանելու, թե չէ նրանից
դու կգամ ու քեզ կմտնեմ. նա կպրծնի, դու շեւ պրծնի:

Դեք գնաց մտավ էն թաքավորի տղի մեջ: Նա գնաց ասեց, որ
ինքը կհանի, շունքի ինչ հեքիմ բերին շկարաց լավացնի նրան:
Լողմա հեքիմը դնաց նրա մոտ թե չէ, դեք դու էկավ ու գնաց
ուրիշ թաքավորի աղի մեջ մտավ: Թաքավորն էլ լսել էր, որ Լողմա
հեքիմը կարա լավացնի, կանչեց. համա նա չէկավ: Չունքի շատ
աղաչանք արին, վեր կացավ դնաց ու դեին ասեց.— Թե ճար ունես՝
տես, կնիկս հրես գալիս ա:

Դեք ասեց.— Բաս որդի՞ մտնեմ:

Նա ասեց.— Արի էս պարկի մեջ մտի:

Նա էլ մտավ թե չէ, տարավ թունդիրը քցեց ու էրեց. էսպեսով
թաքավորի տղեն պրծավ դեից: Թաքավորը իրա աղջիկը տվեց
նրան:

